ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> հոկտեմբերի 2024թ. N ՄՈ/464-Ա

ք. Արմավիր

«ԲԱԳԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գեղեցիկ Ավետիսյանի 2024 թվականի սեպտեմբերի 30-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գեղեցիկ Ավետիսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2024 թվականի հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 6-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գեղեցիկ Ավետիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Արմինե Ավոյանին:
3. «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Արմինե Ավոյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 6-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գեղեցիկ Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի նոյեմբերի 7-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-10-02 15:10:26 GMT+4
Հաստատված է EKAS համակարգի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**